ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1.

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին կից հասարակական խորհրդի (այսուհետ՝ Խորհուրդ) նիստի

2024թ. մարտի 7

Նախագահում էր Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար խորհրդի նախագահ Նարեկ Մկրտչյանը (այսուհետ՝ Նախագահ)

Մասնակցում էին՝

Խորհրդի անդամներ

Սառա Ղազարյան	«Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպություն
Գրիգորի Հովհաննիսյան	«Ակցիա Սովի Դեմ Հիմնադրամի» հայաստանյան մասնաճյուղ
Նվարդ Փիլիպոսյան	«Կանանց ռեսուրսային կենտրոն» հասարակական կազմակերպություն
Միրա Անտոնյան	«Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ
Վարդուհի Դադունց	«Մարդը կարիքի մեջ» հասարակական հիմնադրամ
Ոսկան Ղազարյան	«Վորլդ Վիժն ինթերնեյշնլ» ԲԿ հայաստանյան մասնաճյուղ

Էդուարդ Կիրակոսյան	«Հայաստանի արդյունաբերողների և գործարարների միություն» հասարակական կազմակերպություն
Արևիկ Հովհաննիսյան	«Հայաստանի խուլերի միավորում» հասարակական կազմակերպություն
Ալլա Հարությունյան	«Առաքելություն Հայաստան» ԲՀԿ
Տաթևիկ Նալբանդյան	«Իրական աշխարհ, իրական մարդիկ» սոցիալական հասարարակական կազմակերպություն

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունից (այսուհետ՝ Նախարարություն) մասնակցում էին

Դավիթ Խաչատրյան	նախարարի տեղակալ
Տաթևիկ Ստեփանյան	նախարարի տեղակալ
Աննա Ժամակոչյան	նախարարի տեղակալ
Ռուբեն Սարգսյան	նախարարի տեղակալ
Սամվել Մուրադյան	գլխավոր քարտուղար
Զարուհի Մանուչարյան	մամուլի քարտուղար

Բացակայում էին՝

Աշխեն Հակոբյան	«Աժդահակ» սոցիալ-բնապահպանական կենտրոն» հասարակական կազմակերպություն
Անի Գաբրիելյան	«Լուսաստղ» հասարակական կազմակերպություն
Դավիթ Ամիրյան	«Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստան» կազմակերպություն

Հունան Հունանյան	«Սատար» հաշմանդամների հասարարական կազմակերպություն
Տաթևիկ Խաչատրյան	Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ
Մարուսյա Ճաղարյան	ֆիզիկական անձ
Հայկուհի Թովմասյան	ֆիզիկական անձ
Տաթևիկ Կարապետյան	ֆիզիկական անձ

Օրակարգի նախագծում ընդգրկված էին հետևյալ հարցերը.

1. **Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2025-2027 թթ.միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերի (պարտադիր և շարունակական հայեցողական ծախսերի մասով), ինչպես նաև բյուջետային նոր նախաձեռնությունների ներկայացում**

   (Ներկայացնող՝ Նախարար)

2. **Հարց ու պատասխան. քննարկում**

   - Խորհրդի անդամներ (ՀԿ ներկայացուցիչներ, անհատներ)
   - ԱՍՀ նախարար- Նարեկ Մկրտչյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ- Տաթևիկ Ստեփանյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ- Դավիթ Խաչատրյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ- Աննա Ժամակոչյան
   - ԱՍՀ նախարարի տեղակալ- Ռուբեն Սարգսյան
   - ԱՍՀՆ գլխավոր քարտուղար - Սամվել Մուրադյան
   - ԱՍՀՆ Ֆինանսական և հաշվապահական հաշվառման վարչության պետ -Արմեն Մնացականյան

   - ԱՍՀՆ ամփոփ վերլուծությունների, մոնիթորինգի և գնահատման վարչության պետ –Սվետլանա Հովակիմյան

-Մամուլի քարտուղար- Զարուհի Մանուչարյան

1. Մինչ Խորհրդի տարեսկզբյան առաջին նիստի հարցերին անդրադառնալը՝ Խորհրդի Նախագահը ողջունեց Խորհրդի անդամներին և առաջակեց տեղակալների կողմից նախ մանրամասներ ներկայացնել 2025-2027 թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերի հայտերի, ինչպես նաև բյուջետային նոր նախաձեռնությունների վերաբերյալ, այնուհետև անցնել հարցուպատասխանին:

Ըստ այդմ, նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը ներկայացրեց **հավասար հնարավորությունների ապահովման ոլորտում** իրականացվելիք բարեփոխումները: Անդրադարձավ հաշմանդամություն ունեցող անձանց, տարեցների, երեխաների, ինչպես նաև մարդկանց թրաֆիքինգի և կանանց հիմնահարցերի ոլորտում սահմանված գերակայություններին՝ կարևորելով անձի ֆունկցիոնալության գնահատման համակարգի ներդրման, աջակցող միջոցների տրամադրման, խնամքի ծառայությունների պատվիրակման գործընթացների և մի շարք այլ ուղղություններով անելիքները:

Նախարարի տեղակալ Ա. Ժամակոչյանն անդրադարձավ **սոցիալական աջակցության ոլորտում** նախատեսվող բարեփոխումներին, մասնավորապես՝ ընտանիքների անապահովության գնահատման նոր համակարգի ներդման աշխատանքներին, ինչպես նաև 2025-ին նախատեսվող ծրագրերին և միջոցառումներին:

Նախարարի տեղակալ Դ.Խաչատրյանը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն **ժողովրդագրության և կենսաթոշակային ապահովության ոլորտներում** նախատեսվող փոփոխությունների վերաբերյալ: Ինչպես նաև անդրադարձավ սահմանամերձ գյուղական բնակավայրերում բնակարանային ապահովության, երեխա ունեցող ընտանիքների բնակարանային ապահովության պետական աջակցության ծրագրերի, անկանխիկ գործարքների դեպքում կենսաթոշակների և նպաստների 10 տոկոս հետվճարի և այլ ծրագրերի իրականացման առնչությամբ ընթացիկ և նախատեսվող աշխատանքներին: Միաժամանակ նշեց, որ քննարկման փուլում է գտնվում ԼՂ-ից բռնի տեղահանված քաղաքացիներին բնակարանով ապահովելու պետական աջակցության վերաբերյալ նախատեսվող ծրագիրը:

Նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանը, անդրադառնալով **աշխատանքի և զբաղվածության ոլորտում** իրականացված աշխատանքներին, տեղեկատվություն

ներկայացրեց ոլորտային ռազմավարության մշակման, զբաղվածության ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Այնուհետև նիստի մասնակիցները բարձրացրին մի շարք հարցեր՝ կապված Ժողովրդագրության ռազմավարության նախագծի կատարման ժամկետների, 2023 թ. ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար իրականացվող զբաղվածության ծրագրի շահառուների շրջանակի, ուսուցման վճարի չափի, ծրագրի իրականացման ժամկետների, գործընկերների գործատուների ցանկի, ընթացակարգերի և այլ գործընթացների առնչությամբ:

Հնչեցված հարցերին ի պատասխան՝ Նախարարը պարզաբանեց, որ ժողովրդագրության ռազմավարության նախագիծը գտնվում է ամփոփման փուլում: Ինչ վերաբերում է ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց զբաղվածության պետական աջակցության ծրագրին, նախարարը ներկայացրեց ծրագրի մանրամասները, դրա հանդեպ պոտենցիալ շահառուների հետաքրքրվածությունը:

Նախարարի տեղակալ Ռ. Սարգսյանը հավելեց, որ ՀՀ կառավարության 11.01.2024թ. N 57-Լ որոշմամբ կարգավորվում են վերոնշյալ ծրագրին առնչվող գործընթացները: Գործատուի կողմից շահառուի ուսուցումը կազմակերպելու համար ՄՍԾ տարածքային կենտրոնի, գործատուի և շահառուի միջև կնքվում է ուսուցման կազմակերպման մասին եռակողմ պայմանագիր: Նշեց նաև, որ շահառուի հետ ուսուցման դասընթացի կազմակերպման համար առկա են նախարարության հետ մշտապես համագործակցող կառույցներ, միաժամանակ նախարարությունը պատրաստակամ է նոր գործատուներ ներգրավելու հարցում:

Մասնակիցների կողմից հնչեց նաև առաջարկ՝ կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատակիցների աշխատավարձի բարձրացման համար գործակից կիրառելու վերաբերյալ:

Նախարարն արձագանքեց, որ բարձրացված հարցը քննարկման փուլում է և առաջիկայում նախատեսվում են իրականացնել համապատասխան փոփոխություններ:

Խնամատարություն իրականացնելու գործընթացի առնչությամբ ֆինանսական միջոցների և նախատեսվող երեխաների քանակի ավելացման վերաբերյալ հարցին ի պատասխան՝ նախարարի տեղակալ Տ. Ստեփանյանը պարզաբանեց, որ վերոնշյալ գործընթացի իրականացման հետ կապված նախատեսվել է ֆինանսական միջոցների չափի ավելացում, և առաջիկայում վերանայվելու է համապատասխան իրավական ակտը: Նշեց

նաև, որ հավելյալ աջակցություն է նախատեսվում առողջական խնդիրներ ունեցող 18-20 տարեկան անձանց համար:

Մասնակիցները խոսեցին նաև ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց համար բնակարանային ապահովման նախատեսվող ծրագրի իրականացման մասին, առաջարկելով որպես շահառուներ դիտարկել նաև Գյումրիում ապաստանող անօթևաներին, Թալիշից տեղահանվածներին:

Նախարարը պարզաբանեց, որ ԼՂ-ից բռնի տեղահանված անձանց բնակարանով ապահովելու ծրագիրը գտնվում է քննարկման փուլում և նախատեսվում է շուրջ 25000 ընտանիքի աջակցել բնակարաններով ապահովելու հարցում: Տեղեկացրեց նաև, որ ծրագրի շրջանակում դիտարկվում են նաև ՀՀ թիրախ խմբերը:

Նիստի ավարտին Նախագահը շնորհակալություն հայտնեց հասարակական խորհրդի անդամներին ներկայության և ակտիվ մասնակցության համար՝ նշելով, որ նմանօրինակ հանդիպումները ևս կարող են իրենց ազդեցությունն ունենալ ոլորտային բյուջեի հայտերի կազմման, բարեփոխումների իրականացման գործընթացում:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝ **Ն. ՄԿՐՏՉՅԱՆ**

Արձանագրությունը կազմեց՝ Ա. Խաչատրյանը